

19. ԱՆԽՈՍ ԱՂՋԻԿ

Մեկ թագավոր մը կէղնի, էդ թագավոր ուր աչքերուց կքոռնա։ Հեքիմ կրերին վրեն, հեքիմ կըսե.

— Ձուկ մը կա մըջ ծովուն, թե զէն ձուկ բռնեցին, բերին, ընդոր լեղին հանին, լըցին թագավորի աչքեր, կսաղնա։

Էլավ թագավորի տղեն առավ զհեքիմներն ու մեկ հազար թոռչի մը, գացին։ Թոռչիք թոռ թալեցին մըջ ծովուն, օր մը չէ, էրկու, ասսու հրամանքով զէն ձուկ բռնեցին, դրեցին օսկե լակնի (կոնք) մեջ, տվին թագավորի տղի ձեռ։

Թոռչիք ամեկ վազան, ակնջկլա տարան թագավորին, տղեն մնաց ետևանց, ձուկն էլավ լեզու, ըսեց.

— Թագավորի տղա՛, իմալ օր ղու մեկ իս, ես լէ մեկ իմ, արի՛ զիսի թո՛րկ, երթամ, քու աղեկին աղեկ կէնիմ։

Թագավորի տղեն լէ վերուց զձուկ թալեց ի ծով։ «Հազար տարի իմ պապ քոռնա, զէդ ձուկ պտի պրծոմ».— ըսեց։

Թագավոր ամբ էրեց, օր զտղեն սուրկուն էնին ուր էրկրից։

Քշեցին, տղին հանին ուրանց սինոռից դուս։ Տղեն էր, ընկավ ճամբախ ու գնաց։ Շատ ու քիչ գնաց, աստված դինա, մեկ լէ իշեց օր ճամբխու վրեն օձ մը մուկ մը բռներ է, էդ խուֆարա մուկ հ՚ըմալ կվըժվըժեր, հ՚ըմալ կճըվճըվեր, օր տղի սիրտ էլ թամուլ չտվեց, զարկեց զօձ սպանեց, մուկ փախավ, մտավ ծակ։ Տղեն էլ-մը ճամբախ տվեց առեջ, գնաց։ Տղեն մեկ արտաբոյ տեղ գնաց.

շգնաց, դարձավ իշեց օր մեկ պայե մի ետևանց վազնելին գիգա. կանավ, պայեն էկավ հասավ, հարցուց.— Աղբեր, դո՞ր կէրթաս։

— Իսկի, կէրթամ խարիպ քաղաք մը դատելու։

— Ես լէ քդի ընկեր։

Եղան ընկեր ու գացին։ Փշու մը տեղ գացին, իշեցին օր ուրիշ պայեմ լէ ետևանց կբոռա ու գիգա։ Կանան, էկավ հասավ։

— Դո՞ր կէրթաք, աղբեր,— ըսեց։

— Կէրթանք խարիպ քաղաք մը։

Իրեքն էղան աղբեր։ — Մեռնինք հիտրաց, ապրինք հիտրաց, խոսք տվին իրարու ու էլան, ընկան ճամբախ։ Գացին մեկ ջոջ քաղքի մեջ ուրանց դուքյան մը քիոով բռնեցին, էն մեկ աղբեր էղավ խայվաջի, մեկել էրկուս լէ ամեկ բանի մը էղան, դեպրադե դեպրադե (հետզհետե) դովլաթվորցան, էղան դունի մալի տեր։

Էղավ օր էդ քաղքի մեշն լէ մեկ ախչիկ մը կեր, անուն Սոյլամաղ-խանըմ։ Էդ ախչիկ ըսկի մարդու հետ չզրուցեր, որն օր զընդոր տեր զրուցք, թագավոր կպսակե վրը ընդոր։

Էլան էն էրկու աղբեր կանան, ըսին թագավորի տղին.

—Աղբեր, էս օր դու մեր ջոջն իս, քզի կարգինք, դոր գա մըզի։

— Չէ, մե՛,— ըսեց թագավորի տղեն, հրմա տեսավ օր յախա չպրծու, ըսեց.— Դու դինաք ,իմալ կէնիք, էրեք։

— Աղբեր,— ըսեցին,— մենք պտի Սոյլամաղ-խանըմն ուզենք քզի։

— Թառ՞ւ, «Սոյլամաղ-խանըմ ուզինք քզի»։

— Քզի դավի չկա, մենք կիտանք զրուցք։

Էլան էդ աղբրտան, առան ղթագավորի տղեն, գացին աղչկա պապու մոտ։

— Մենք էկեր ինք օր քու ախչիկ տաս մեր աղբոր։

— Թրխ էղնի, օր ղիմ ախչիկ տվեցիք զրուցք, ես լէ կիտամ։

Էդ երկու աղբերն են, էլան առան ղթագավորի տղեն, զխազին, զմուֆդին ու դեմ գացին ախչկա մոտ։

Ճամբեն էն մեկ աղբեր թագավորի տղին քաշեց թահնա, ըսեց.

— Աղբեր, ես կէղնիմ մուկ, դու զիս դիր քու ջեպ, օր գացինք Սոյլամազ-խանըմի մոտ, դու զիս թորկ, ես կէրթամ մտնիմ ընտրա չրախպի (աշտանակ) տակ։ Ներս օր մտար, բարև տո՛ւր, ախչիկ՝ գինամ, քու բարև չառնի, դարձի իմ թարաֆ, ըսե. «Չրախպա աղբեր, բարի իրկուն քզի». ես քու բարև կառնիմ։ Դարձի էլմը աղչկան ըսե.

«Սոյլամազ-խանըմ, մժուլիմ էրե, ականջ էնինք». էնի քզի ականջ չէնե. նոր էլմը դարձեք իմ թարաֆ, ես ըստապուն կզրուցիմ։

Ըդոնք են, էլան հիտրաց գացին մըտ Սոյլամազ-խանըմ։ Ներս մտան թը չէ, թագավորի տղեն հուշիկ մը զմուկ հանեց, թորկեց. մուկ գնաց, մտավ չրախպի տակ։ Թագավորի տղեն բարև տվեց։ Սոյլամազ-խանըմ չառավ զըդրա բարև. դարձավ չրախպին.

— Բարի իրկուն, չրախպա աղբեր,— Չրախպեն զբարևն առավ։

— Սոյլամազ-խանըմ, մժուլի մ'էրե, ականջ էնինք։

Սոյլամազ-խանըմից ձեն չելավ. տղեն դարձավ չրախպին.

— Չրախպա աղբեր՝ մժուլիմ էրե, ականջ էնինք։

Չրախպեն էլավ զրուցք։ Մաճլիս հ'ըմեն ականջ էրին։ Ըսեց.

— Իրեք հոգի մեկ արտ մը կիսրար կցանին, մեկ կէղնի լծքի տեր, մեկ արտի տեր, էն մեկել լէ սերման տեր։ Ցանքից օր կիսըլըսին, մեկ ժուկ մը կմնա, արտ կհասնի, կբերին քաղին, ծեծին, կէրնին, կշեղջին, ըստապուն գիկան օր կիսին մըջ իրար, կկռվին, ջոջ խալապալըղ մի կսարքին։ Սերմի տեր կըսե. ընծի կհասնի, արտի տեր կըսե՝ ընծի, լծի տեր կըսե՝ ընծի. խազի, մուֆթի, ըպա էդի վի՞ր պտի հասնի։ Խազին ըսեց. «Կհասնի լծքի տիրուն». մուֆթին ըսեց. «Կհասնի արտի տիրուն»։

Սոյլամազ-խանըմ վերուց, ըսեց. «Աստված ձեր պես շարյաթ գևտնուվի տանե. էդ իմա՞լ շարյաթ կէնիք. կհասնի ցորնի տիրուն։

— Խազի, մուֆթի,— ըսեց տղեն, —դու շհա՞տ իք օր Սոյլամազ-խանըմ զրուցեց։

Հ'ըմեն հըտ իրար ըսեցին.— Հա՛։

Էդոնք էլան, գացին, թագավորի աղջիկ գնաց չրախպի բոլոր։

— Տո փիցուկի չրախպա,— ըսեց,— դու հ'որի՞ հըտ հ'իս չզրուցիս, էդ հ'որի խարիպ մարդու հետ կզրուցիս։

Բռնեց ջարդեց, բրդեց չրախպեն, թափեց դուս։

Էն լուամթի էլ մը թագավորի տղեն ու մաճլիս էկան մըտ աղջիկ։ Տղեն հըտ մտնելուն, մուկ թորկեց. ըտհաղս լէ մուկ գնաց, մտավ աղջկա գարձի տակ։

Թագավորի տղեն էլմը բարև տվեց, աղջիկ զբարև չառավ։

— Բարի իրկուն քզի, բարձ աղբեր։

— Բարով խերով էկար, թագավորի տղա։

— Բարձ աղբեր, մժուլի մ'էրե, ականջ էնինք։

Բարձ աղբեր վերուց, ըսեց.— Մեկ տերտեր մը, թարզի մը ու նաճար մը կէղնին, ըդոնք կընկնին ճամբախ, կէրթան, մեշի մեջ

մութ կիտա վրե ուրանց, կըսին. «Դորով զիրար պահինք, չէղնի ջանավար մանավար մըջ քնուն ուտի մզի»։

Առջի հեղ դոր ընկավ նաճարին, էն էրկուս քնան։

Նաճար էլավ ուրին խաղնելիք, փետե իսան մը շինեց, դրեց հոն։ Սհաթն օր թմավ, նաճար իմցուց զթարզին, ինք քնավ։ Ըստախուն թարզին մուղատ կեցավ։ Թարդին իշեց, օր հանտե նաճար փենտե իսան մը շինե, դրե հոն, ըսեց. «Էդի զուր մարիֆաթն է ցուցուցեր, կանի ես լէ զիմ մարիֆաթ ցուցում»։

Թարզին լէ էլավ, ձեռք մը կնկա հալավ կարեց, հադուց։

Սհաթն օր թմավ, դոր էկավ տերտրոջ. տերտեր էլավ։

Տերտերն էր, առջի հեղ էլավ լվացվավ, խաչ հանեց երես, բերեց կրակ վառեց, իշեց կուշտ ու բոլոր, տեսավ օր մեկ նոր հարս մը կանուկ է։ Տերտեր խղճուկ, միամիտ, բանից խապար չուներ. դարձավ, ըսա. «Օրշնած, արի նստի». Է՛, փետից ձեն կելնի՞, ժաժ գիգա՞։ Տերտեր էլավ, կանավ, ձեռ թալեց օր բերեր, նստցուցեր, հարս շրրփաց ի դետին, էղավ քառսուն ու չորս կտոր։

Տերտեր էր, կանավ լաց. «Վա՜յ, վա՜յ,— ըսեց,— էղա պարտատեր, մտա մեղքի տակ, իմա՞լ զէդ քուլֆաթ սպանեցի»։

Տերտեր էդ տեղ կանավ ժամ ու պատարագի, լաց ու աղաղակեց, աստվածուտեն օղորմացավ, զէդ փետե ինսնին հոգի տվեց։

Լուս ու մթին իրեք լէ ելան, զէդ փետե կնկա վրան զիրար տարան, բերին (կովեցան), նաճար ըսեց՝ «Ընծի կհասնի», թարզին ըսեց՝ «ընծի», տերտեր լէ ըսեց՝ «ընծի». մըկա խազի, մուֆթի, շարյաթ ձեր ձեռն է, էդ վի՞ր կհասնի։

Խազին ըսեց.— Կհասնի նաճարին։

Մուֆթին ըսեց.— Կհասնի թարզուն։

Սոյլամազ-խանըմ վերուց, ըսեց.— Աստված զձեր շարյաթ գետնուկի տանե. տերտեր կանավ արնե-արտսունք թափեց, աստվածուտեն ընդրա խեղճն իշեց, զփետն հոգևորցուց, հոգի էկավ ինք, էդի տերտերոջ կհասնի։

— Խազի, մուֆթի, շրհատ մացեք, էրկու հաղ կզրուցեն։

Մաճլիս էլան գացին, Սոյլամազ-խանըմ էկավ բարձի բոլոր, վերուց զբարձ, ձևրոտեց, էրեց ճզիկ-ճզիկ, թալեց մեկ դի։

Լուսմթի քոման, էլ մը էկան, թագավորի տղեն զմուկ թորկեց. ըստապուն մուկ գնաց մտավ աղջկա մինտարի տակ։

— Մինտար աղբեր,— ըսեց թագավորի տղեն,— կիշիմ օր բարձ աղբեր հ՚ոտա չէ, դու մժուլիմ էրե, ականջ էնինք։

— Վըր իմ գլխուն։— ըսեց մինտար, —ականջ էրեք։

Կէղնի մեկ ըխտիար մարդ մը սիվտակ մուրուսավոր, մեկ լէ ալեխառն նոր էր ընկե շաճեն. էն մեկել լէ նորահաս տղե մը, նոր էր մրե պեխեր։ Գելնան, կընկնան ճամբախ, կէրթան մեկ սարի մը գլոխ, կիշկին օր հանդե թաժա նոր հարս մը էն դիուց զընգլուկ-զարդրուկ գիգա։ էն ծեր մուրքավոր ըսեց.— «Չէ, վոյլա՜, իմն է», էն ջեհել էլ ըսեց. «Չէ, էդի նոր հարս է, ես ջեհել տղա, հ՚իս կհասնի»։ Խազի՛, մուֆթի՛, շարյաթ էրեք, վի՞ր կհասնի։

Խազին ըսեց.— Ընդոնց ջոջն էն մուրքավորն է, կհասնի ընտրան։

Մուֆթին ըսեց.— Չէ, կհասնի էն ալեխառն մարդուն։

Սոյլամազ-խանըմ վերուց ըսեց.

— Աստված ձեր շարյաթ դետնուվի տանե, կհասնի էն նորահաս տղին, օր թաժա պեխեր մրեր է։

— Խազի, մուֆթի, դու շհա՞տ իք, օր Սոյլամազ-խանըմ իտա լէ իրեք հաղ՝ օր զրուցեց։

— Հա,— ըսեցին,— մենք ասու առեշ շհատ ինք, աղշիկ հալալ ու խոշ էղնի քզի։

Էլան ըստապուն Սոյլամազ-խանըմ ուղին թագավորի տղին. դհոլ ու գուսանք զարկին, խաղ ու խնդում էրեցին, բերին ղէդոնց պսակնցին։ էն մեկ աղբեր առավ զթուր՝ կանավ մութ տեղ՝ տղեն էրեց չէրեց, աղջիկ չգնաց մոտ։ Պարկավ քնավ։ Սոյլամազ-խանըմ լէ միամտավ, քնավ։ Չէն տեսավ, օր պատ բլավ ու հ՚ուշապ մը բերան բաց ու ֆսալին զինք թալեց ներս, օրոտում ընկավ էդ հ՚օտեն։ Հ՚ուշապ դեմ էրեց վըր տղի տեղաց, օր զտղեն կլուցեր, թուր քաշող աղբեր մութ տեղեն վազավ ընկավ վըր հ՚ուշապին, բրթեց էրեց թութուն, թափեց փանճարի տակ։ Դու մըսի էդ հ՚ուշապ լէ սեր թալեր էր էդ ախչկան, էկեր էր զտղեն կլուցեր, առներ զախչիկ ուրին։

Սոյլամազ-խանըմ նակաստան թռավ, իմցավ, իշեց դես ու դեն, բան չկա, լըլկեց զտղեն, տեսավ տղեն սաղ էր։ Նոր էն մութ կանող աղբեր քոռաց.

— Սոյլամազ-խանըմ, էլ մը վախեցի, զքու խանիմ ղուրպան էրեց քզի։

Նոր Սոյլամազ-խանըմի զիպար բացվավ, խնդացավ, էկավ վըր տղին օտաց.

Անֆանտըմ, շատ չերկնցունք, ժամանակ մը մեջ ընցավ, էն մեկ աղբերն ըսեց թագավորի տղին.

— Աղբեր, էլի առ զքու քոլֆաթ, էլմը էրթանք դրպա մեր էրկիր։

Գացին, թագավորից իզին առան, էկան, բարձան զտուն ու դը՛ քշե, գացին հասան էն տեղն, օր թագավորի տղեն զմուկ օձի բերնեն պրծուցեր էր։

— Դե՛, թագավորի տղա,— ըսեց էն մեկ աղբեր,— ես էն մուկն իմ, օր ղընծի զալմ օձու ձեռնեն պրծուցիր, իմ իզին տուր, ես մտնիմ իմ ծակ։

Թագավորի տղեն նոր սարվախթ էղավ. դարի տես, ինչ փաթվան իրար վղով, պաղրատեցին, խնտացան։ Մուկ ջոկնվավ, մտավ ի ծակ, ընդոնք քշեցին, էկան։ Էկան ծովու պռունկ, ելան դուս, ըստապուն էն մեկել աղբեր կանավ, ըսեց.

— Թագավորի տղա՛, ես լէ էն ձուկ աղբերն իմ, օր ղընծի պրծուցիր. դը կանի, ես քու պապու աչքերուն լէ դեղ բերիմ, նոր զիմ իզին տուր։— Ձուկ զինք թալեց ի ծով, առավ զդեղն, էլավ ի դուս, տվեց տղին.— Դը գնա,— ըսեց,— աստված քու բան հաջողե։

Տղեն քշեց էկավ, ձեն հասավ ուր պապուն թե. «Տղեն կարգըվեր է, հրտ ուրին քու աչքերու դեղ լէ բերեր է»։

Էկան ձիով ու ձիավորով, զուռնով վերցին զտղեն, առոքփառոք տարան թագավորի սարի դուռ իշուցին։ Դեղ հասուցին, թագավորի աչքեր հրտ գալուն բացվավ նոր էլավ թաժա զուր տղին հարսնիսն էրեց, քառսուն օր վըր իրար քեֆ ու խաղ ու խնտում էրեցին. ըստապուն թագավոր բերեց զուր թախտն ու թաճ թասլիմ էրեց տղին։

Մնաց ժամանակ մը, տղի վրեն սաֆար (կռիվ) բացվավ։ Տղեն էր, ժողվեց զուր օրտուն, գնաց զուր դուշման ալթ էրեց, դարձավ էկավ նոր նստավ ու վելեց զուր թագավորութեն։

Հիսուս միան, տերն իմ խաչե, օր հասնի հ՚ըմեն նեղածներուն, ետի սողին լէ զիդա ըսողին։